ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 20.05.2019թ.

Մ Ի Ջ Ա Ն Կ Յ Ա Լ Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ՆԳ-2019/39

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, հիմք ընդունելով ՀՀ կրթության և գիտության նախարարության 22.04.2019թ. թիվ 04/6465-19 գրության հիման վրա «Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան» հիմնադրամին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ նախաձեռնելու մասին ՀՀ ֆինանսների նախարարության 29.04.2019թ. թիվ 26/26-1/7042-2019 գրությունը, ինչպես նաև հաշվի առնելով մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերի բազմակողմանի ուսումնասիրելու անհրաժեշտությունը և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

«Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան» հիմնադրամին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ՍՑ-ՆԳ-2019/39 ընթացակարգի քննության ժամկետը երկարաձգել 10 օրացույցային օրով և ՀՀ գնումների

հետ կապված բողոքներ քննող անձի որոշման հրապարակման վերջնաժամկետ սահմանել 30.05.2019թ. ներառյալ:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**